#01/2017
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ



Վճարովի պարապմունքները հանրակրթական դպրոցներում. Պատճառներ և հետևանքներ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել վճարովի հիմունքներով հանրակրթական լրացուցիչ ծրագիր իր կանոնադրությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով[1]:

Վճարովի պարապմունքների պրակտիկան կամ կրկնուսույցների գործունեությունը Հայաստանի կրթական համակարգի համար նոր երևույթ չէ, սակայն տարիների ընթացքում այն տարածվել է՝ աստիճանաբար ընդգրկելով վճարովի պարապմունքների հաճախող աշակերտների ավելի լայն շրջանակ, ինչը նաև ահազանգում է կրթության որակի հետ կապված խնդիրների մասին:

ՀՀ օրենսդրությամբ վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթությունը դպրոցի տարածքում թույլատրվում է միայն ծնողի և դպրոցի միջև համապատասխան պայմանագրի հիման վրա: Դպրոցի տարածքից դուրս ուսուցիչների կողմից մատուցվող մասնավոր պարապմունքների հարցը որևէ իրավական կարգավորում չի ստացել: Օրենսդրորեն արգելված չէ նաև տվյալ առարկան դասավանդող ուսուցչի կողմից նույն դասարանի աշակերտների հետ պարապմունքներ անցկացնելու հնարավորությունը:

Այս իրավիճակում առկա են/առաջանում են կոռուպցիոն ռիսկեր, որոնք հիմնականում պայմանավորված են ոլորտում առկա կրթության ցածր որակի, շահերի բախման, վերահսկողության պակասի և մի շարք այլ խնդիրների հետ:

Հիմնախնդիրներ

Կրթության ցածր որակը խթանում է վճարովի հիմունքներով կրթություն ստանալու պահանջարկի ավելացումը

Ավագ դպրոցի յուրաքանչյուր 2-րդ աշակերտ վճարովի պարապմունքների է մասնակցում[4]:

Ծնողների կողմից երեխաների գիտելիքները խորացնելու, զբաղվածությունն ապահովելու, նրանց վարքի նկատմամբ վերահսկողություն ապահովելու և այլ նմանօրինակ օբյեկտիվ գործոններից բացի, մասնավոր պարապմունքների պրակտիկայի տարածմանը և դրանից բխող կոռուպցիոն ռիսկերի առաջացմանը նպաստում են նաև կրթության որակին առնչվող մի շարք խնդիրներ, այդ թվում՝

- բուհական ընդունելության քննությունների բարդությունը դպրոցի կրթական ծրագրի բովանդակության համեմատ.
- ավագ դպրոցների անբավարար որակը[2].
- առաջադրանքների կատարման գործնական հմտություններ ձևավորելու դպրոցի անկարողությունը.
- դասագրքերի բովանդակության անհամապատասխանությունը երեխաների տարիքային առանձնահատկություններին և կարիքներին.
- ուսուցիչների անբավարար մասնագիտական պատրաստվածությունը[3].
- գնահատման թերի գործընթացը և առաջադիմության կեղծ գնահատումը:

Ուսուցիչը հնարավորություն ունի լիարժեք չկատարելու իր պարտականությունները՝ աշակերտներին իր մոտ լրացուցիչ վճարովի պարապմունքների ներգրավելու ակնկալիքով

Ներկայում որևէ իրավական ակտով արգելված չէ տվյալ առարկան դասավանդող ուսուցչի կողմից նույն դասարանի աշակերտների հետ վճարովի պարապմունքներ անցկացնելու հնարավորությունը:

Չնայած աշակերտներին առաջարկվող վճարովի պարապմունքներն ինքնին բացասական կամ դատապարտելի երևույթ կամ անբարեխիղճ վարքագիծ չի կարելի համարել, սակայն դրանք առավել խնդրահարույց են շահերի բախման և կոռուպցիոն այլ ռիսկերի տեսանկյունից: Վճարովի պարապմունքների ամենաբացասական հետևանքներից մեկն աշակերտների նկատմամբ ուսուցչի կողմից տարբերակված մոտեցում ցուցաբերելն է. ուսուցիչը հակված է նախապատվություն տալ այն աշակերտներին, ում հետ արտադասարանային պարապմունքներ է անցկացնում: Ուսուցչի երկակի դերն ազդեցություն է ունենում նրա մոտիվացիայի և դիրքորոշման վրա և առաջացնում է շահերի բախման իրավիճակ: Հնարավոր չէ բացառել, որ ուսուցիչն աշակերտների ցածր առաջադիմությունը կընկալի որպես լրացուցիչ եկամտի հնարավորություն[5]: Իսկ այս պարագայում հավանական է թե՛ անհիմն ցածր գնահատականների նշանակումը և թե՛ աշակերտներին անհիմն պահանջներ ներկայացնելը կամ այլ չարաշահումները:

Դպրոցների լրացուցիչ կրթական ծրագրերը համընկնում են պարտադիր դասավանդվող հանրակրթական ծրագրերի հետ

Պայմանագրի հիման վրա վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթությունն կարող է իրականացվել միայն ուսումնական պլանով տվյալ դասարանի առարկայացանկում չընդգրկված առարկաներից[6]:

Չնայած սահմանված արգելքին, հատկապես տարրական դասարաններում, վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթությունը հաճախ իրականացվում է տվյալ դասարանների առարկայացանկում ընդգրկված առարկաներից (օրինակները շատ են հատկապես օտար լեզուների, շախմատի, մաթեմատիկայի դեպքում): Դպրոցները նշված սահմանափակումը շրջանցելու հնարամիտ եղանակ են գտնում: Օրինակ՝ անգլերենի պարապմունքի անունը դնում են «Անգլիայի պատմություն», սակայն պարապում են անգլերեն: Որքան էլ որ պայմանագրերի հիման վրա լրացուցիչ վճարովի պարապմունքների անցկացումը արտաբյուջետային միջոցներ ձևավորելու և դպրոցի համար լրացուցիչ եկամուտներ ապահովելու օրենսդրությամբ թույլատրված հնարավորություն է, սակայն դպրոցի տարածքում կրթական այնպիսի ծառայության տրամադրումը, որը մատուցվում է նաև դպրոցի կողմից հանրակրթական ընդհանուր ծրագրերի շրջանակներում, բազմաթիվ անառողջ երևույթների կարող է հանգեցնել:

Երևանում վճարովի հիմունքներով (պայմանագրի հիման վրա) լրացուցիչ կրթություն կազմակերպվում է միայն տասը դպրոցներում[7], իսկ մարզերում ուսումնասիրված 136 մասնավոր պարապմունքների դեպքերից միայն 2-ում է դպրոցի կամ ուսուցչի հետ կնքվել պայմանագիր[8]:

Ուսուցիչները շահագրգռված չեն լրացուցիչ վճարովի պարապմունքների կազմակերպումն իրականացնել ծնողների հետ օրինական պայմանագրային հարաբերությունների հիման վրա

Պայմանագրի գործողության պարագայում վճարովի պարապմունքներից ակնկալվող ուսուցչի վարձատրությունը կրճատվում է: Ծնողի տված վարձավճարը պետք է մուտք արվի դպրոցի բյուջե՝ որպես արտաբյուջետային միջոց: Այս միջոցների մի մասը պետք է ուղղվի դպրոցի ծախսերին, ինչի արդյունքում պարապմունքն անցկացրած ուսուցչի վարձատրությունը բնականաբար կնվազի: Որպես հետևանք՝ լրացուցիչ պարապմունքներ իրականացնող ուսուցիչները խուսափում են դրանց պայմանագրային ձևակերպումից, որպեսզի չկրճատվի ակնկալվող եկամուտը:

Մասնավոր պարապմունքների նկատմամբ վերահսկողությունն անբավարար է

Թեև Կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչությունն ունի լիազորությունների լայն շրջանակ[9], սակայն մասնավոր վճարովի պարապմունքների հարցը հիմնականում դուրս է մնում տեսչական ստուգումների շրջանակից: Տեսչության ստուգումները, որպես կանոն, հիմնվում են դպրոցի և մանկավարժական անձնակազմի կողմից տրամադրված փաստաթղթերի վրա և անդրադառնում են տարբեր ընթացակարգերի պահպանմանը, որում արտացոլված չեն կրթության որակին և մասնավոր պարապմունքներին առնչվող ամենաարդիական հարցերը:

Առաջարկություններ

Ներքոհիշյալ առաջարկություններն ուղղված են վերհանված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՊԵՏՔ Է

- օրենսդրորեն արգելի առարկան դասավանդող ուսուցչի կողմից վճարի դիմաց մասնավոր պարապմունքների տրամադրումն իր աշակերտներին՝ անկախ դասընթացների անցկացման վայրից (տանը, թե դպրոցում).
- օրենսդրորեն սահմանի պատասխանատվության միջոցներ ինչպես մանկավարժական անձնակազմի, այնպես էլ դպրոցի տնօրինության համար
  - ✓ մասնավոր պարապմունքներին մասնակցության դրդելու նպատակով աշակերտների և/կամ նրանց ծնողների վրա ցանկացած տեսակի ներգործության համար,
  - ✓ մասնավոր պարապմունքի հաճախող աշակերտի թվանշանի անհիմն բարձրացման համար,
  - ✓ պայմանագրի պահանջները խախտելու համար:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է

- ապահովի լիազոր պետական մարմինների պատշաճ վերահսկողությունը դպրոցներում լրացուցիչ վճարովի կրթական ծրագրերի իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության նկատմամբ՝ կրթության պետական տեսչության լիազորությունների և ստուգումների շրջանակում ներառելով մասնավոր պարապմունքներին առնչվող խնդիրները:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է

- մշակի հանրակրթական դպրոցների տնօրենների և ուսուցիչների համար էթիկայի կանոններ՝ ներառելով նաև շահերի բախման դեպքում վարքագծի կանոնները.
- բուհերի ընդունելության քննությունների առաջադրանքների բարդությունը համապատասխանեցնի հանրակրթական դասագրքերի առաջադրանքների բարդությանը.
- վերանայի և նվազեցնի յուրաքանչյուր դասարանում աշակերտների առավելագույն թվաքանակը.

- վերանայի դասագրքերի բովանդակությունը՝ դրանք համապատասխանեցնելով երեխաների տարիքային առանձնահատկություններին և անհրաժեշտ գործնական կարողություններին.
- մշակի ուսուցիչների պաշտոնի անձնագրեր, որոնցով հստակ սահմանված կլինեն ուսուցիչներին ներկայացվող նվազագույն պահանջները, պարտականությունների ծավալը, աշխատանքի նկարագրությունը, հիմնական գործառույթները.
- սահմանի աշակերտների առաջադիմության գնահատման և թվանշանի ձևավորման հստակ չափանիշներ.
  - ✓ մշակի աշակերտների առաջադիմության այլընտրանքային գնահատման մեխանիզմներ,
  - ✓ թվանշանի ձևավորման սկզբունքներն ու մոտեցումը դարձնի հնարավորինս թափանցիկ՝ և՛ սովորողների, և՛ նրանց ծնողների համար,
  - ✓ զարգացնի ուսուցչի կողմից թվանշանի մեկնաբանության և հիմնավորման պրակտիկան/մշակույթը.
- ավագ դպրոցների ուսուցիչներին առաջադրի աշակերտների բարձր կրթական արդյունքների ապահովման պահանջ՝ միաժամանակ ապահովելով պատշաճ վարձատրությամբ և խորհրդատվական-մեթոդական աջակցությամբ.
- ներդնի լրացուցիչ վճարովի կրթական ծրագրերի ծառայություններ մատուցելու համար ուսուցիչների շահագրգռման մեխանիզմեր (օրինակ՝ այդ ծառայությունների վճարի չափի մեջ բարձրացնելով ուսուցիչների վարձատրության չափը) և կանխի այդ պարապմունքների ստվերային բնույթը:

---

[1] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 7 և 15:

[2] Այդ խնդրի ակտուալությունն ընդունում է նաև ԿԳ նախարարը՝ մի շարք հարցազրույցներում: Օրինակ՝ *«Սայլը տեղից շարժելու ժամանակը՝ ըստ Լևոն Մկրտչյանի»*, Առավոտ, 01.07.2016:

[3] Այս մասին տես նաև *ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույց*, 2014:

[4] Հանրակրթական դպրոցներում իրականացված քանակական հետազոտության տվյալներ (առավել մանրամասն՝ «Կոռուպցիոն ռիսկերի գնահատում հանրակրթության ոլորտում» հետազոտության մեջ):

[5] Այս մասին տե՛ս նաև *ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույց*, 2014:

[6] ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1496-Ն որոշում:

[7] Աղբյուրը՝ Երևանի քաղաքապետարան:

[8] Հանրակրթական դպրոցներում իրականացված քանակական հետազոտության տվյալներ (առավել մանրամասն՝ «Կոռուպցիոն ռիսկերի գնահատում հանրակրթության ոլորտում» հետազոտության մեջ):

9 ՀՀ կառավարության 16.03.2006թ. թիվ 497-Ն որոշում:

Սույն համառոտագիրը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Հանրային Քաղաքականության Ինստիտուտ» հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված ուսումնասիրության հիման վրա, որի վերաբերյալ «Կոռուպցիոն ռիսկերի գնահատում ՀՀ հանրակրթության բնագավառում» հրապարակումը հասանելի կլինի www.transparency.am կայքում:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Անտառային փողոց, տուն 164/1, Երևան 0019, Հայաստան
Հեռ.՝ (+374 10) 569589, 569689, Ֆաքս՝ (+374 10) 569519
info@transparency.am ● www.transparency.am
www.facebook.com/TIArmenia ● www.twitter.com/TI_Armenia